# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ԲԵԼԳԻԱ




IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԵԼԳԻԱ

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

**Հրատարակիչ՝** Միգրացիայի միջազգային կազմակերպություն

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**
Հայաստան • Երևան 0010 • ՄՄԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
**Հեռ.՝** (+374 10) 58 56 92 • 58 37 86 • **Հեռապատճեն՝** (+374 10) 54 33 65
• **Էլ.փոստ՝** iom@arminco.com • http://www.iom.int/armenia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մուտքի ընդհանուր պայմանները
և տեղեկություններ վիզայի մասին .................................... 5
2. Միգրացիա զբաղվածության նպատակներով ................ 8
3. Ներգաղթ ուսանելու նպատակով ................................ 15
4. Կացություն.................................................................... 22
5. Ապաստանի տրամադրման ընթացակարգը ................. 23
6. Ընտանիքների վերամիավորում .................................. 25
7. Առողջապահական համակարգը.................................. 26
8. Սոցիալական ապահովագրության
համակարգը..................................................................... 28
9. Բնակարանային պայմաններ ...................................... 29
10. Դիպլոմների ճանաչում (պայմաններ,
համապատասխան մասնագիտական մարմիններ).......... 30
11. Միգրանտներին առաջարկվող աջակցության
ծառայություններ ............................................................ 32
12. Քաղաքացիության ծեռքբերում................................. 34

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԵԼԳԻԱ

## 1. Մուտքի ընդհանուր պայմանները և տեղեկություններ վիզայի մասին

### Ում վիզա հարկավոր չէ

ԵՄ և Եվրոպական տնտեսական տարածքի քաղաքացիներից և երրորդ երկրների քաղաքացիներից, որոնց (երկրների) հետ Բելգիան ունի առանց վիզայի ռեժիմ, չի պահանջվում վիզա՝ Բելգիա մուտք գործելու համար: Նրանք կարող են բնակվել երկրում ոչ ավելի, քան 90 օր՝ վեցամսյա ժամկետում, սկսած առաջին մուտքի օրվանից:

### Վիզայի տեսակները

Բելգիական իշխանությունները կարող են տրամադրել չորս տիպի վիզաներ: Վիզայի տիպը ցույց է տրվում վիզայի դրոշմի վրա՝ հատուկ բաժնում, և նշվում է հետևյալ տառերից որևէ մեկը. A, B, C կամ D:

<u>Օդանավակայանի տարանցիկ վիզա - A</u>

Այս վիզան իրավունք է տալիս այն օտարերկրացիներին, ովքեր պարտավոր են դա ունենալ, մնալ օդանավակայանի միջազգային տարանցիկ տարածքում՝ իրենց միացնող թռիչքին սպասելիս, սակայն թույլ չի տալիս մուտքը երկիր:

<u>Տարանցիկ վիզա - B</u>

Այս վիզան մեկ երկրից մյուսն ուղևորվող օտարերկրացուն իրավունք է տալիս տարանցել Շենգենյան տարածքի միջով:
Տարանցիկ վիզա կարող է տրամադրվել միայն այն դեպքում, եթե օտարերկրացին ապացուցում է, որ իրեն թույլատրվում է մտնել հաջորդ

նպատակակետ երկիրը՝ Շենգենյան տարածքում իր գտնվելուց հետո: Տարանցիկ վիզա կարող է տրվել մեկանգամյա կամ կրկնակի տարանցման համար, և, որպես բացառություն, բազմակի տարանցումների համար՝ պայմանով, որ երկրի միջով ոչ մի տարանցում չգերազանցի այն օրերի քանակը, որը որոշվել է վիզայի դրոշմի «Գտնվելու տևողությունը» բաժնում: Տարանցիկ վիզաները օրենսդրորեն չպետք է գերազանցեն 5 օրը:

Կարճաժամկետ վիզա - C

Այս վիզան իրավունք է տալիս օտարերկրացուն մուտք գործել և մնալ Շենգենյան տարածքում զբոսաշրջային, գործարար, անձնական կամ որևէ այլ այցով կամ մուտքի համանման նպատակներով: Կարճաժամկետ վիզա կարող է տրվել մեկանգամյա, կրկնակի կամ բազմակի մուտքերի համար երկիր, որտեղ ո՛չ մեկանգամյա չընդհատված գտնվելը, ո՛չ մի շարք անգամ հաջորդաբար գտնվելու հավաքական տևողությունը չպետք է գերազանցի 90 օրը՝ վեցամսյա ժամկետում, սկսած առաջին մուտքի օրվանից:

Որոշ կատեգորիաների անձանց, օրինակ, գործարարների, ուսանողների և լրագրողների համար, փաստաթղթերի պահանջները կլինեն պարզեցված:

Հաճախ ճամփորդողների որոշակի կատեգորիաների (ներառյալ գործարարները, լրագրողները, ուսանողները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) կտրամադրվի բազմակի մուտքի վիզա՝ վավերության երկար ժամկետներով, իսկ դիվանագիտական անձնագրեր կրողները կազատվեն վիզայի պարտավորությունից:

Երկարաժամկետ վիզա (D)

Այս տեսակի վիզայի դիմումներ կարող են ներկայացվել միայն Բելգիայի դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններին, որոնք իրավասու են դիմողի բնակության վայրի համար:

Հատուկ ընթացակարգեր են սահմանված որոշակի իրավիճակների համար, այսինքն, ուսումնասիրությունների, զբաղվածության նպատակների, ինքնազբաղվածության, ընտանիքի վերամիավորման, համատեղ բնակության, որդեգրման և Բելգիայում ամուսնության համար վիզայի: Մյուս բոլոր անհատական դեպքերը մեկ առ մեկ կքննվեն Օտարերկրացիների գրասենյակի (վարչության) կողմից: Ավելին, դիմումը պետք է ներկայացվի ժամանակին, որպեսզի Օտարերկրացիների գրասենյակը (վարչությունը) հնարավորություն ունենա հարկ եղած դեպքում անցկացնելու հետաքննություն:

Բելգիա ժամանելուն պես դուք պետք է քաղաքային (համայնքային) իշխանություններին հայտնեք ձեր բնակության վայրի մասին:

Կոնկրետ իրավիճակների, օրինակ, զբաղվածության, ուսումնառության, ընտանիքի վերամիավորման մասին մանրամասները ստուգեք հետևյալ հասցեում՝
http://www.diplomatie.be/en/travel/visaLangdetail.asp?TEXTID=22013,
կամ կապվեք Բելգիայի ձեր տեղական ներկայացուցչության հետ: Զբաղվածության, ուսումնառության և ընտանիքի վերամիավորման նպատակով երկարաժամկետ վիզան մանրամասնորեն նկարագրված է հետագա բաժիններում:

**Բելգիայի Թագավորություն, Անտվերպեն**
Պարոն Հայկ Արսլանյան
Պատվավոր հյուպատոս,
Բելգիա, Անտվերպեն 2020, Բելլա Ֆելլաան 79
Հեռ.՝ (323) 2329792, Ֆաքս՝ (323) 2332902

**Kingdom of Belgium Antwerp**
Mr. Haik Arslanian
*Honorary Consul*
79, Bella Faillelaan, 2020 Antwerp, Belgium
Tel: (323) 2329792, Fax: (323) 2332902

**Գերմանիայի Դաշնային Հանրապետություն**
**(BUNDESREPUBLIK DEUTSCHLAND)**
Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանություն
Երևան, Չարենցի 29
Հեռ.՝ 523279, 524581, 586591
Ֆաքս՝ 524781
Էլ. փոստ՝ info@eriw.diplo.de
Ինտերնետ՝ www.eriwan.diplo.de

## 2. Միգրացիա զբաղվածության նպատակներով

### ա) օտարերկրյա աշխատողների մուտքի և գտնվելու պայմանները (այդ թվում՝ աշխատանքի թույլտվությունների և աշխատանքի վիզաների տեսակները և պահանջները, և պատասխանատու իշխանությունները)

<u>Ժամանակավոր կացության թույլտվություն</u>

Ցանկացած ապագա բնակիչ (ռեզիդենտ), որը ցանկանում է երեք ամսից ավելի մնալ Բելգիայում որպես ուսանող, վարձու աշխատող, ինքնազբաղված աշխատող կամ անկախ միջոցներ ունեցող անձ, պետք է առաջին հերթին դիմի իր ծագման երկրում Բելգիայի դեսպանատուն կամ հյուպատոսություն՝ «Ժամանակավոր կացության թույլտվություն» (Voorlopige Verblijfsvergunning (VVV) / Autorisation de Sejour Provisoire (ASP) ստանալու: Գործնականում դա նշանակում է ստանալ մուտքի արտոնագիր երեք ամսից ավելի երկար ժամկետով:

Դիմումին կից պետք է ներկայացվի լավ վարքագծի մասին վկայական (կամ դրան համարժեք՝ բելգիական իշխանությունների կողմից ճանաչված փաստաթուղթ)՝ տրված բնակության երկրի իրավասու մարմինների կողմից, և բժշկական տեղեկանք՝ տրված բելգիական դեսպանատան կամ հյուպատոսության կողմից ճանաչված բժշկի կողմից:

Եթե այդ փաստաթղթերը ֆրանսերեն կամ հոլանդերեն չեն, ապա դրանք պետք է թարգմանված լինեն վկայագրված թարգմանչի կողմից:

Ժամանակավոր բնակության թույլտվությունը (VVV/ASP), տրամադրվում է՝ կախված իրավասու բելգիական իշխանությունների կողմից աշխատանքի թույլտվության կամ «Մասնագիտական քարտի» (beroepskaart/carte professionnelle) շնորհումից:

Բելգիա ժամանելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում դուք պետք է գրանցվեք բնակության համայնքապետարանի բնակչության կամ օտարերկրացիների բաժնում: Պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

- Վավեր անձնագիր՝ ժամանակավոր կացության թույլտվությամբ (VVV/ASP),
- Աշխատանքի թույլտվություն կամ մասնագիտական քարտ,
- Անձնագրի երեք լուսանկար:

Գրանցման համար գանձվում է փոքր վարձավճար, որը տարբեր համայնքներում տարբեր է:

<u>Ինքնազբաղվածներ</u>

Եթե դուք ցանկանում եք հաստատվել Բելգիայում որպես ինքնազբաղված, պետք է ձեռք բերեք քարտ, որը լիազորություն է տալիս իրականացնելու ինքնազբաղվածի գործունեություն: Քարտը տրամադրվում է էկոնոմիկայի, փոքր և միջին բիզնեսի, ինքնազբաղվածների և էներգետիկայի դաշնային հանրային ծառայության կողմից:

Մասնագիտական քարտի համար դիմեք էկոնոմիկայի, փոքր և միջին բիզնեսի, ինքնազբաղվածների և էներգետիկայի դաշնային հանրային ծառայություն՝ Բրյուսել 1000, Սիմոն Բոլիվարի բուլվար 30, Առևտրի համաշխարհային III կենտրոն:

Հեռ.՝ + 32 2/208.51.33, 34, 35 կամ +32 22 / 208.51.04,
Ֆաքս +32 2 2/208.51.47 - mariejeanne.meuris@mineco.fgov.be կամ yolande.servais@mineco.fgov.be:

Լրագրողներ

Լրագրողների համար կիրառվում են հատուկ պայմաններ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք http://www.diplomatie.be/en/travel/visaLangdetail.asp?TEXTID=22015:

Աշխատանքի թույլտվություն

Աշխատանքի թույլտվությունը պետք է ձեռք բերի Բելգիայում գտնվող գործատուն կամ նրա ներկայացուցիչը՝ ենթատարածաշրջանային զբաղվածության ծառայությունից, որը ներառում է գործատուի բիզնեսի գտնվելու վայրը: Դուք պետք է ձեր հավանական գործատուին տրամադրեք առողջության վկայական (տեղեկանք) և երեք անձնագրի չափսի լուսանկար, որոնք նա այնուհետև առաջարկվող աշխատանքային պայմանագրի պատճենի հետ միասին ներկայացնում է Աշխատանքի նախարարություն:

Նախքան աշխատանքի թույլտվություն տրամադրելը Աշխատանքի նախարարությունը պետք է պարզի, որ չկա Բելգիայի կամ ԵՄ այլ պետության քաղաքացի, որը կարող է լրացնել տվյալ աշխատատեղը: Աշխատանքի նախարարությունը կարող է տվյալ աշխատատեղի համար գործատուին ուղարկել թեկնածուներ գործազրկության նպաստ ստացող բելգիացիների իրենց ցուցակներից:

Որոշ կատեգորիաների աշխատողներից աշխատանքի թույլտվություն չի պահանջվում: Այս հարցի վերաբերյալ տեղեկություններ կարող եք ձեռք բերել Բելգիայում՝ վերը նշված հասցեներից կամ արտասահմանում իրավասու բելգիական դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններից:

Բելգիայում կան երեք տիպի աշխատանքի թույլտվություններ.

- <u>A տիպի թույլտվությունը</u> ձեզ թույլ է տալիս աշխատել Բելգիայում ցանկացած գործատուի համար՝ անսահմանափակ ժամկետով: Այս թույլտվությունները տրամադրվում են միայն հետևյալ կատեգորիաների դիմորդներին. A թույլտվություն ունեցող անձի ամուսնուն (կնոջը), Բելգիայի քաղաքացու ամուսնուն (կնոջը), որը ԵՄ անդամ չհանդիսացող պետության քաղաքացի է, Բելգիայում օրինական բնակիչ հանդիսացող ԵՄ պետության քաղաքացու ամուսնուն (կնոջը), որը ԵՄ անդամ չհանդիսացող պետության քաղաքացի է, ինչպես նաև ցանկացած օտարերկրացու, որը հինգ տարի անընդմեջ եղել է Բելգիայի (օրինական) բնակիչ:

- <u>B տիպի թույլտվությունը</u> ուժի մեջ է մեկ գործատուի համար՝ մեկ տարով, որից հետո կարող է երկարաձգվել (նույն գործատուի կողմից, սովորաբար նույն աշխատանքի կամ աշխատանքի դասակարգման համար): Եթե դուք փոխում եք գործատուներին, ապա ձեր նոր գործատուն պարտավոր է դիմել նոր B տիպի թույլտվության համար: Չնարավոր է, որ ձեզանից պահանջվի վերադառնալ ձեր հայրենի երկիր և կրկին դիմել կացության վիզայի համար, նախքան ձեզ թույլ կտրվի սկսել ձեր նոր աշխատանքը: B թույլտվությունը չորս կամ ավելի անգամ երկարաձգելուց, այսինքն՝ Բելգիայում նույն թույլտվությամբ հինգ տարի ապրելուց և աշխատելուց հետո կարող եք ստանալ անսահմանափակ ժամկետով A թույլտվություն:

- <u>C տիպի թույլտվությունն</u> ուժի մեջ է միայն մեկ տարի և ունեցողին թույլ է տալիս աշխատել բազմաթիվ գործատուների համար: Սա սովորաբար տրվում է միգրանտ գյուղատնտեսական աշխատողներին կամ հայրենական աշխատողներին: C տիպի թույլտվություններն ընդհանուր առմամբ նորացման ենթակա չեն:

B տիպի թույլտվությունը օտարերկրացիների մեծ մասի համար տիպային աշխատանքի թույլտվությունն է: B թույլտվության համար դիմելը

գործատուի պարտականությունն է, որը ցանկանում է վարձել ԵՄ պետության քաղաքացի չհանդիսացող օտարերկրացու: B տիպի թույլտվության տրամադրումը կարող է տևել մինչև 12 շաբաթ:

Աշխատանքի թույլտվությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել հետևյալ հասցեներից`
**Ֆլամանդական համայնքի նախարարություն**
**Զբաղվածության վարչություն**
Բրյուսել 1000
Ռու դու Մարկիզ 1
Հեռ.` + 32 2/553.42.56
http://www2.vlaanderen.be/werk/mig_kort.htm

**Ministry of the Flemish Community**
**Employment Administration**
Rue du Marquis 1
1000 Brussels
Tel: + 32 2/553.42.56
http://www2.vlaanderen.be/werk/mig_kort.htm

**Բրյուսելի` մայրաքաղաքի շրջանի նախարարություն**
**Տնտեսության և զբաղվածության վարչություն**
Բրյուսել 1030
Ռու դյու Պրոգրես 80
Հեռ.` +32 2/204.21.11
http://www.bruxelles.irisnet.be/en/citoyens/home/travailler/travailler_comme_ressortissant_etranger.shtml

**Ministry of the Brussels-Capital Region**
**Economy and Employment Administration**
Rue du Progres 80
1030 Brussels
Tel: +32 2/204.21.11
http://www.bruxelles.irisnet.be/en/citoyens/home/travailler/travailler_comme_ressortissant_etranger.shtml

**Վալոնիայի շրջանի նախարարություն**
**Տնտեսության և զբաղվածության գլխավոր տնօրինություն**
Ժամբ 5100
Պլաս դե լա Վալոնի 1
Հեռ.՝ +32 81/33 37 00, Ֆաքս՝ 33 38 88

**Ministry of the Walloon Region**
**Directorate-General for the Economy and Employment**
Place de la Wallonie, 1
5100 Jambes
Tel: +32 81/33 37 00 - fax 33 38 88

## բ) Աշխատողների պակաս զգացող աշխատաշուկայի հատվածները

*Ֆլանդերսի շրջան.* արդյունաբերության, էլեկտրոնիկայի, էլեկտրաէներգիայի, մեխանիկական և էլեկտրամեխանիկական ճարտարագիտական (ինժեներական) ոլորտներ, շինարարություն, համակարգչային ծրագրավորում, խնամքի անձնակազմ և վաճառքի ներկայացուցիչներ, մաքրող անձնակազմի, հյուրանոցային և ռեստորանային տնտեսություն:

*Բրյուսելի շրջան.* ճարտարապետներ, ճարտարագետներ, բուժքույրեր, տեխնիկներ, ավագ մենեջերներ և պատասխանատուներ, շինարարության և տեխնիկական սպասարկման աշխատակիցներ, SS մասնագետներ, գրասենյակային անձնակազմ, վաճառքի անձնակազմ, խոհարարներ և մատուցողներ, կոսմետոլոգներ և վարսահարդարներ:

*Վալոնիայի շրջան.* կոսմետոլոգներ, շինարարության բանվորներ, վարորդներ և լոգիստիկ անձնակազմ, ավտոմեխանիկներ, սննդի արդյունաբերության բանվորներ, ապահովագրական խորհրդատուներ, հեռախոսային կենտրոնի օպերատորներ, վաճառքի անձնակազմ, գործադիր պատասխանատուների օգնականներ, բուժքույրեր, ֆինանսական խորհրդատուներ, ճարտարապետներ:

## գ) աշխատանքի որոնման կայքեր

www.careerjet.be
www.startpeople.be
Բելգիայում ժամանակավոր տեխնիկական և ինժեներական անձնակազմի հավաքագրում:
www.eurobrussels.com
Բրյուսելի աշխատատեղերի առաջատար կայքը եվրոպական հարցերի և միջազգային հարաբերությունների ոլորտում:
www.jobs-brussels.com
աշխատատեղեր Բելգիայում՝ միջազգային կառույցներում և ՀԿ-ներում:
www.pmo.be
արտասահմանյան անձնակազմի ընտրություն, հավաքագրում և կառավարում:

## դ) օտարերկրացի տնային աշխատողների և օտարերկրյա աշխատուժի այլ որոշակի ծրագրեր

Օտարերկրացի տնային աշխատողները պետք է ժամանակավոր բնակության թույլտվության հայցը ներկայացնեն իրենց բնակության վայրում իրավասու Բելգիայի դեսպանատուն կամ հյուպատոսություն: Սկզբունքորեն, այս թույլտվությունը կարող է տրամադրվել երիտասարդ անձին՝ հետևյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում.

- Ազգային անձնագիր, որը վավեր է առնվազն մեկ տարի,
- Դիմորդի անձի նկարագրի վերաբերյալ թարմ տեղեկանք, որն ընդգրկում է վերջին հինգ տարիները,
- Դեսպանատան կողմից հաստատված բժշկի տրամադրած բժշկական վկայական (տեղեկանք),
- B տիպի աշխատանքի թույլտվություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք
http://www.emploi.belgique.be/defaultTab.aspx?id=4890
Տես նաև՝ www.easyaupair.com

## 3. Ներգաղթ ուսանելու նպատակով

Կրթությունը ֆլամանդական համայնքում

«Ուսումը Ֆլանդերսում» կայքը լավ մշակված պորտալ է ցանկացած օտարերկրացու համար, ով ցանկություն ունի ուսանելու Ֆլանդերսում: http://www.studyinflanders.be/

http://www.eurydice.org/ressources/eurydice/eurybase/pdf/0_integral/BN_EN.pdf: Այս գրքույկում թվարկված և բացատրված են տարբեր աստիճանները և դիպլոմները, որոնք կարելի է ձեռք բերել ֆլամանդական ուսումնական հաստատություններում: Գրքույկը տրամադրում է նաև տեղեկություններ Ֆլանդերսում ուսումնառության տարբերակների մասին, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների համապարփակ ակնարկ և ֆինանսական տեղեկություններ բոլոր տեսակի դասընթացների մասին (օրինակ, դրամաշնորհների):

Կրթությունը Ֆրանսիական համայնքում

http://www.studyinbelgium.be/start.php?lang=en&rub=1 հասցեում կարող եք գտնել ակնարկ ֆրանսախոս Բելգիայում ուսումնառության հնարավորությունների մասին: http://www.cfwb.be/infosup/pg009.htm կայքը (ֆրանսերեն) տրամադրում է մանրամասներ այն մասին, թե ում դիմել, եթե ցանկանում եք ձեռք բերել լրացուցիչ տեղեկություններ:

### ա) մուտքի և մնալու պայմանները ուսանողների համար (ուսանողական վիզա, կացության թույլտվություններ, աշխատելու իրավունք, եթե կիրառելի է)

Ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար պետք է ձեր երկրում գտնվող Բելգիայի դեսպանություն կամ հյուպատոսարան ներկայացնեք հետևյալը.

- ճանաչված բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում ընդունման կամ գրանցման վկայական կամ արտերկրում շնորհված դիպլոմի կամ վկայականի համարժեքության վկայականի դիմում (պահանջվում է միայն Ֆրանսիական համայնքում ուսանելու համար): Ընդունման վկայականը կամ գրանցման վկայականը պետք է ծածկի լիաժամկետ ուսման դասընթացը,
- կամ ընդունման կամ գրանցման վկայականը բուհ ընդունվելու քննությունների վերաբերյալ, երբ այդ քննությունները խնդրո առարկա դասընթացի ընդունելության պայմանն են. մասնավորապես՝ ֆրանսերեն լեզվի իմացության ստուգման քննությունը, որը պահանջվում է Ֆրանսիախոս համալսարաններում սովորելու իրավունք ստանալու համար, քաղաքացիական ճարտարագիտության որակավորման քննությունը, ընդունելության քննությունը բժշկական կամ ատամնաբուժության կրթության համար հոլանդախոս համալսարանում,
- կամ մուտք գործելու կամ գրանցման վկայականը որևէ հաստատված հաստատության համար,
- կենսապահովման բավարար միջոցների ապացույց (դրամաշնորհի կամ վարկի վկայական կամ երաշխավորության նամակ, որով պատասխանատվություն է վերցվում օտարերկրյա ուսանողի ծախսերի համար՝ ոչ պակաս, քան մեկ ուսումնական տարվա ընթացքում),
- բժշկական տեղեկանք,
- լավ վարքագծի վկայական,
- ճամփորդական փաստաթուղթ (անձնագիր), որը վավեր է առնվազն մեկ տարի:

<u>Տարրական և միջնակարգ դպրոցում կրթության հատուկ կարգը</u>

Դիմումը պետք է ներկայացվի «Օտարերկրացիների գրասենյակ», և պետք է բավարարվեն հետևյալ երկու պայմանները.

- դիմորդը պետք է ունենա ընտանեկան կապեր (մինչև երրորդ աստիճանի, այսինքն, պապ, տատ, եղբայր, քույր, հորեղբայր,

մորեղբայր, հորաքույր, մորաքույր, զարմիկ, զարմուհի) որևէ անձի հետ, որը Բելգիայի օրինական բնակիչ (ռեզիդենտ) է,

- հայտատուն պետք է անկարող լինի հետամուտ լինելու նույնատիպ կրթության իր երկրում կամ որևէ հարևան երկրում:

Լրացուցիչ տեղեկություններ՝
http://www.diplomatie.be/en/travel/visaLangdetail.asp?TEXTID=22051

Աշխատելու իրավունք

ԵՄ անդամ պետության քաղաքացի չհանդիսացող ուսանողնեը, ովքեր ցանկանում են աշխատել Բելգիայում իրենց ուսումնառության ընթացքում, պետք է պաշտոնապես գրանցված լինեն որպես ուսանողներ և ունենան վավեր փաստաթղթեր իրենց մնալու համար: Ուշադրություն. այն ուսանողները, ովքեր առաջին անգամ են ժամանում Բելգիա ամառային արձակուրդի ժամանակ, չեն կարող անմիջապես աշխատել, քանի որ նրանք դեռևս պաշտոնապես գրանցված չեն (մինչև պարապմունքների առաջին օրը): Սուրբ Ծննդյան, Զատիկի և ամառային արձակուրդների ընթացքում օտարերկրյա ուսանողները կարող են կատարել ուսանողի աշխատանք՝ առանց աշխատանքի թույլտվության: Նշված ժամանակաշրջաններից դուրս պաշտոնական ուսումնառության նպատակով օրինական հիմքերով Բելգիայում ապրող ուսանողներին տրամադրվում է C տիպի աշխատանքի թույլտվություն՝ պայմանով, որ նրանց աշխատանքը չգերազանցի շաբաթական 20 ժամը և համատեղելի լինի պարապմունքների հետ:

## բ) բուհական և հետբուհական կրթաթոշակներ

Բելգիայի զարգացման համագործակցության կայքում թվարկված են բոլոր պաշտոնական մարմինները, որոնք առաջարկում են դրամաշնորհներ Բելգիայում.
http://www.dgdc.be/en/dgdc/grants/index.html

Հետբուհական կրթաթոշակներ Գենտի համալսարանում զարգացող երկրներից եկած ուսանողների համար

Գենտի համալսարանի այս ծրագիրը տրամադրում է հետբուհական կրթաթոշակներ զարգացող երկրների թեկնածուների համար, ովքեր ցանկանում են ձեռք բերել մագիստրոսի աստիճան Գենտի համալսարանում: Դրամաշնորհները տրամադրվում են Գենտի համալսարանի բոլոր մագիստրոսական ծրագրերի համար: Դրանք շնորհվում են առավելագույնը 2 տարի տևողությամբ ուսումնառության համար: Երկամյա ծրագրի դեպքում կրթաթոշակը վճարվում է ամբողջ ժամկետի համար, եթե ուսանողը հաջողությամբ ավարտում է առաջին տարվա ծրագիրը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Հետազոտությունների համակարգման գրասենյակ (chris.simoens@ugent.be):

Ռոբերտ Շումանի դրամաշնորհներ

Ռոբերտ Շումանի դրամաշնորհներ տրամադրվում են դոկտորական կամ հետդոկտորական ուսանողներին, ովքեր ունեն եվրոպական հիմնահարցերին և համայնքային քաղաքականությանն առնչվող հետազոտական նախագծեր: Ազգությամբ ֆրանսիացի չհանդիսացող ուսանողները պետք է սովորեն ֆրանսիական բարձրագույն ուսումնական հաստատությունում: Կրթաթոշակի բովանդակությունը մասնավորեցված չէ:

Ովքեր կարող են դիմել.

Հարավ-Արևելյան Եվրոպայի պետությունների քաղաքացիները

Կոնտակտային տվյալներ՝

http://www.robert-schuman.org

Վալոնյայի-Բրյուսելի միջազգային գրասենյակի կարճաժամկետ և երկարաժամկետ դրամաշնորհներ արտասահմանցի ուսանողների համար որոշակի բնագավառներում՝

http://www.wbri.be/cgi/bin3/render.cgi?id=0132992_article&userid=&lang=ln3&rubr=trad_en

Ֆլամանդական կրթաթոշակներ

http://www.studyinflanders.be/?navid=430&direct_to=Funding_opportunities

http://www.cfwb.be/allocations-etudes (ֆրանսերեն). օգտակար տեղեկություններ այն մասին, թե ինչպես ներկայացնել դիմում ուսանողական դրամաշնորհի կամ ուսանողական վարկի համար:

## գ) գլխավոր բուհերի և քոլեջների ցուցակ

Ֆլամանդական համայնք

Համալսարաններ

Հինգ ֆլամանդական համալսարաններ շնորհում են բակալավրի, մագիստրոսի և դոկտորի ակադեմիական աստիճաններ.

- Universiteit Antwerpen, Անտվերպեն, www.ua.ac.be
- Vrije Universiteit Brussel, Բրյուսել, www.vub.ac.be
- Universiteit Gent, Գենտ, www.ugent.be
- Universiteit Hasselt, Հասելտ, www.uhasselt.be
- Katholieke Universiteit Leuven, Լյուվեն, www.kuleuven.be

Բարձրագույն ուսումնական հաստատություններ
(Ամբողջական ցանկի համար այցելել
http://www.studyinflanders.be/?navid=429&direct_to=Institutions)

- Erasmushogeschool Brussel (Erasmushogeschool Brussel) - http://www.ehb.be/english/index.jsp?topNav=toekomstig
- GROEP T - Leuven Hogeschool (T խումբ՝ Լյուվենի համալսարանական քոլեջ) - http://www.groept.be/www/?setlang=en
- Hogere Zeevaartschool (Անտվերպենի ծովային ակադեմիա) - http://www.hzs.be/html_EN/start.htm
- Hogeschool Antwerpen (Անտվերպենի համալսարանական քոլեջ) - http://www.ha.be/
- Hogeschool Gent (Գենտի համալսարանական քոլեջ) - http://english.hogent.be/

Ֆրանսիական համայնք

Համալսարանների և բարձրագույն ուսումնական հաստատությունների մանրամասն ցանկը կարելի է գտնել հետևյալ հասցեում.
http://www.studyinbelgium.be/start.php?lang=en&rub=8

Բակալավրի, մագիստրոսի և դոկտորի ակադեմիական աստիճաններ շնորհող համալսարաններ.

- FPMs, Faculte Polytechnique de Mons - http://www.fpms.ac.be/FPMsHome/en/Accueil
- FUCaM, Facultes Universitaires Catholiques de Mons - http://www.fucam.ac.be/
- FUNDP, Facultes Universitaires Notre-Dame de la Paix - Namur - http://www.fundp.ac.be/
- FUSAGx, Faculte universitaire des Sciences agronomiques de Gembloux - www.fsagx.ac.be/fac/en/default.asp
- FUSL, Facultes universitaires Saint-Louis - http://www.fusl.ac.be/
- UCL, Universite catholique de Louvain - http://www.uclouvain.be/en-index.html
- ULB, Universite Libre de Bruxelles - http://www.ulb.ac.be/international/
- ULg, Universite de Liege - www.ulg.ac.be/
- UMH, Universite de Mons-Hainaut - http://www.umh.ac.be/

Բարձրագույն ուսումնական հաստատություններ
(Ամբողջական ցանկի համար այցելել
http://www.studyinbelgium.be/start.php?lang=en&rub=8)

- Haute Ecole de Bruxelles (HEB) - http://www.heb.be
- Haute Ecole de la Communaute francaise Paul-Henri Spaak (HESpa) - http://www.he-spaak.be
- Haute Ecole Galilee (HEGal) http://www.galilee.be
- Haute Ecole ≪Groupe ICHEC - ISC Saint-Louis - ISFC≫ (HE Groupe ICHEC) http://www.ichec.be

- Institut superieur d’Architecture de la Communaute francaise – La Cambre http://www.lacambre-archi.be
- Sede de Mons Institut superieur d’Architecture http://isa-mons.umh.ac.be/architecture.htm
- Sede de Lieja Institut superieur d’Architecture Lambert Lombard http://www.archi-lombard.ulg.ac.be
- I.N.S.A.S. – Institut national superieur des Arts du spectacle et des Techniques de diffusion http://www.insas.be
- I.A.D. – Institut des Arts de diffusion http://www.iad-arts.be
- I.M.E.P – Institut superieur de Musique et de Pedagogie http://www.imep.be

## դ) օտարերկրյա ուսանողների ծրագրեր

Եվրոպայի քոլեջ, Բրյուգե
Այս հաստատությունն առաջարկում է դոկտորական և մագիստրոսական աստիճաններ եվրոպական տնտեսական հետազոտությունների, եվրոպական իրավական հետազոտությունների, եվրոպական քաղաքական և վարչական հետազոտությունների, կամ ԵՄ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հետազոտությունների բնագավառներում.
http://www.coleurop.be/template.asp?pagename=studyintro

Ֆլամանդական համայնք
Տվյալների հետևյալ բազայում թվարկված ուսումնական ծրագրերը հավատարմագրված ոչ-հոլանդալեզու դասընթացներ են, որոնք դասավանդվում են որևէ ֆլամանդական համալսարանում, համալսարանական քոլեջում կամ այլ հետդիպլոմային ուսումնական հաստատությունում:
http://www.studyinflanders.be/?navid=428&direct_to=Study_programmes

Ֆրանսիական համայնք
Հետևյալ հղումը տրամադրում է տեղեկություններ Ֆրանսիական համայնքում առկա ծրագրերի վերաբերյալ.
http://www.studyinbelgium.be/start.php?lang=en&rub=5

# 4. Կացություն

Բելգիա ժամանող բոլոր օտարերկրյա քաղաքացիները, ովքեր մտադիր են մնալ 90 օրից ավելի, պետք է ձեռք բերեն կացության թույլտվություն:

Նախքան Բելգիա ժամանելը ԵՄ պետությունների քաղաքացի չհանդիսացող անձինք պետք է դիմեն որևէ բելգիական դեսպանատուն կամ հյուպատոսություն՝ ժամանակավոր կացության թույլտվություն (autorisation de sejour provisoire / voorlopige verblijfsvergunning - ASP / VVV) ստանալու համար: Կացության թույլտվություններ տրամադրվում են միայն աշխատելու, սովորելու կամ զուգընկերների կամ ընտանիքի անդամների հետ ապրելու համար: Նրանք այնուհետև պետք է գրանցվեն Քաղաքապետարանում՝ Բելգիա ժամանելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, նույնիսկ եթե ապրում են ժամանակավոր կացարանում: Մշտական կացարան տեղափոխվելուց հետո երկու շաբաթվա ընթացքում դուք պետք է դիմեք օտարերկրացու ինքնության (նույնականացման) քարտ ստանալու և օտարերկրյա բնակչության գրանցամատյանում պաշտոնապես գրանցվելու համար:

Տեղական ոստիկանությունն ստուգում է, որ տվյալ անձի անունը գրված է այն հասցեի դռան վրա, որը նրանք տվել են համայնքին: Եթե հասցեն ճիշտ է, քաղաքապետարանը տրամադրում է օտարերկրյա բնակչության գրանցամատյանում գրանցման վկայական (Certification d'Inscription dans le Registre des Etrangers/Bewijs van Inschrijving in het Vreemdelingen Register) (սպիտակ քարտ):

Գրանցման վկայականը ենթակա է վերականգնման մեկ տարի անց, եթե դրանում սահմանված չէ տևողության մնալու որևէ սահմանափակում, կամ եթե աշխատանքի թույլտվությունը կամ մասնագիտական քարտն այլևս վավեր չէ: Նոր հասցե տեղափոխվելիս դուք պետք է երկու շաբաթվա ընթացքում վերագրանցվեք նոր տեղական քաղաքապետարանում:

Գրանցման վկայականի փաստաթուղթը օտարերկրացիներին թույլ է տալիս ճանապարհորդել Եվրոպայի սահմաններում՝ այն երկրներում, որոնք ստորագրել են Շենգենյան դաշնագիրը:

Բելգիայում կացություն ունեցող (բնակվող) յուրաքանչյուր ոք պետք է ձեռք բերի բելգիական ինքնության փաստաթուղթ: Օտարերկրացիների համար սա այն թույլտվությունն է, որը տրամադրվում է կացության տրամադրման ընթացակարգի ավարտին և ծառայում է որպես Բելգիայում բնակվելու իրավունքի ապացույց: Դա սովորաբար անվանվում է «ինքնության քարտ», թեպետ ցույց է տալիս ճանապարհորդելու և բնակության այլ իրավունքներ, քան՝ Բելգիայի քաղաքացու ինքնության քարտը: 15-ից բարձր տարիքի բոլոր անձինք՝ ռեզիդենտ կամ ոչ-ռեզիդենտ, պետք է մշտապես իրենց հետ կրեն ինքնության փաստաթուղթ:

<u>Մշտական բնակության թույլտվություն</u>

Սա վավեր է 5 տարի և կարող է երկարաձգվել անսահմանափակ անգամ: Ձեր տվյալները կընդգրկվեն ձեր համայնքի բնակչության հաշվառման գրանցամատյանում:

# 5. Ապաստանի տրամադրման ընթացակարգը

Բելգիայի օրենքը նախատեսում է պաշտպանության երկու կարգավիճակներ.

- փախստականի կարգավիճակ,
- երկրորդային պաշտպանության կարգավիճակ:

Ցանկացած անձ, որը գալիս է Բելգիա պաշտպանություն խնդրելու համար, պետք է Օտարերկրացիների գրասենյակ (Office des Etrangers) ներկայացնի ապաստանի դիմում: Ընթացակարգի ժամանակ ապաստան հայցողը կստանա որոշակի իրավունքներ (ժամանակավոր բնակության իրավունք, ընդունող հաստատություններից օգտվելու իրավունք, առողջապահության իրավունք): Այլ իրավունքներ կտրամադրվեն

ճանաչված փախստականին կամ երկրորդային պաշտպանության շահառուին:

Օտարերկրացիների գրասենյակը (Office des Etrangers) Ներքին գործերի նախարարության գլխավոր տնօրինություն է: Դա բելգիական այն կառույցն է, որն իրավասություն ունի այն ամենի նկատմամբ, ինչը կապված է Բելգիայում օտարերկրյա քաղաքացիների բնակության հետ:

Ապաստանի դիմումի շրջանակներում Օտարերկրացիների գրասենյակը պատասխանատու է ապաստանի դիմումներին ընթացք տալու համար: Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով Գլխավոր Յանձնակատարի գրասենյակը (Commissariat General aux Refugies et Apatrides – CGRA) Ներքին գործերի նախարարության վարչական ծառայությունն է, որն ուսումնասիրում է Բելգիայում ներկայացված ապաստանի դիմումները, և շնորհում կամ մերժում է պաշտպանությունը: Դիմորդը կարող է բողոքարկել CGRA-ի որոշումները Փախստականների վերաքննիչ մշտական հանձնաժողով (PCAR), որը վարչական վերաքննիչ դատարան է:

Բելգիայում փախստականներից աշխատանքի թույլտվություն չի պահանջվում: Երկրորդային պաշտպանության կարգավիճակ ստացածները պետք է դիմեն C տիպի աշխատանքի թույլտվություն ստանալու:

Ապաստան հայցողների ընդունման դաշնային գործակալությունը (Fedasil) պատասխանատու է Բելգիայում ապաստան փնտրողների ընդունման համար:

Բրյուսել 1000, Ռու դե Շարտրո 21
(Rue des Chartreux 21 - 1000 Brussels)
Յեռ.՝ +32 2-213 44 11 Ֆաքս՝ +32 2 2-213 44 22
info@fedasil.be
www.fedasil.be
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք
http://www.cire.irisnet.be/ressources/guides/guide-asile-en.pdf:

# 6. Ընտանիքների վերամիավորում

Բելգիայի քաղաքացիների ընտանիքի անդամները (և Եվրոպական Տնտեսական Տարածքի քաղաքացիները կամ Շվեյցարիայի քաղաքացիները), ինչպես նաև ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների քաղաքացիները, ովքեր օրինական հիմքերով բնակվում են Բելգիայում (այս կատերգորիաների նկատմամբ կիրառվում են տարբեր կանոններ):

Ընտանիքի անդամը կարող է դիմել կա՛մ ընտանիքի վերամիավորման վիզա ստանալու դեսպանատնից կամ հյուպատոսությունից, կա՛մ կացության թույլտվություն ստանալու Բելգիայում փաստացի բնակության վայրի քաղաքային իշխանություններից՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր:

Կարող են դիմել ընտանիքի հետևյալ անդամները.

- ամուսինը (կինը),
- ծնողները, պապը, տատը (միայն Եվրոպական տնտեսական տարածքի քաղաքացու հետ ընտանիքի վերամիավորման համար),
- 18 տարեկանից ցածր՝ խնամքի տակ գտնվող երեխաները:

Այն դեպքում, երբ մուտքի արտոնագրի դիմումը ներկայացնում է ամուսինը (կինը), դիմումին պետք է կցվեն դիմողի ծննդյան վկայականի պատճենը, ամուսնության վկայականի պատճենը, լավ վարքագծի թարմ վկայական, ապացույց, որ ամուսինը (կինը) Բելգիայի օրինական բնակիչ է:

Այն դեպքում, երբ մուտքի արտոնագրի դիմումը ներկայացնում են երեխաները, դիմումին պետք է կցվեն ծննդյան վկայականի պատճենը, երեխայի խնամակալ (պահառու) անձի հայտարարագիրը, որով երեխային թույլ է տալիս մեկնել Բելգիա, ապացույց, որ ծնողը Բելգիայի օրինական բնակիչ է:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն վավերացված ճշմարիտ պատճեններ՝ պատշաճ կերպով օրինականացված և թարգմանությամբ ուղեկցված:

## 7. Առողջապահական համակարգը

Առողջապահական ապահովագրությունը Բելգիայի սոցիալական ապահովության համակարգի մասն է, և դրանից օգտվելու համար դուք պետք է ընդգրկվեք առողջության ապահովագրման որևէ փոխադարձ հիմնադրամի (mutualite) կամ ziekenfonds-ին (mutualiteit):

Բելգիական որևէ ընկերությունում աշխատանքի ընդունվելուց հետո ձեր և ձեր գործատուի մուծումները ինքնաբերաբար կգանձվեն ձեր աշխատավարձից Սոցիալական ապահովության ազգային գրասենյակի կողմից: Ապա դուք կգրանցվեք առողջության ապահովագրման որևէ հիմնադրամում, որը կփոխհատուցի ձեր բժշկական ծախսերը: Ձեզ գրանցելու համար նրանք կպահանջեն ձեր գործատուի կողմից ստորագրված գրավոր հավաստագիր զբաղվածության մասին: Դուք կարող եք ընտրել ձեր ցանկացած ընկերությունը: Թեև դրանց մեծ մասը կապված են որևէ կրոնական կամ քաղաքական կառույցի հետ, սակայն իրական տարբերություն չկա, քանի որ փոխհատուցման մակարդակներն ամրագրված են Բելգիայի կառավարության կողմից: Սակայն այդ հիմնադրամները 100 տոկոսով չեն ծածկում ձեր հաշիվները. ձեզ կարող են փոխհատուցել բժիշկներին կամ նեղ մասնագետներին դիմելու գնի մոտավորապես կեսից մինչև երեք քառորդը:

Հետևաբար, շատերը նախընտրում են լրացուցիչ մասնավոր ապահովագրություն (complementaire):

Փոխադարձ հիմնադրամների ցանկը գտնելու համար այցելեք http://www.inami.fgov.be/homefr.htm և սեղմեք Organismes assureurs (ֆրանսերեն) կամ http://www.riziv.fgov.be/homenl.htm, ապա՝ Verzekeringsinstellingen (հոլանդերեն):

Ապահովագրվելով դուք ստանում եք տիպայնացված վարկային քարտի նման Systeme d'Information Sociale (SIS) քարտ, որը դուք պետք է ունենաք դեղատներից և հիվանդանոցներից օգտվելիս: Դուք կստանաք նաև կպչուն կտրոններով (vignettes) մի թերթիկ, որոնք պետք է կցեք բժշկի ներկայացրած հաշվին՝ փոխհատուցում ստանալու համար:

Բելգիայում կան երկու տեսակի հիվանդանոցներ: Հիվանդանոցը կամ ziekenhuis-ն ունի իր սեփական անձնակազմը, որը հերթապահում է օրական 24 ժամ: Եթե դուք ընդունվել եք այդ հիվանդանոցներից մեկը, դուք այնտեղ գտնվելիս հավանաբար ամենևին չեք տեսնի ձեր ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժշկին, քանի որ ձեզ ընդունելուց հետո ձեզ համար պատասխանատու են հիվանդանոցի աշխատակիցները: Կլինիկան (clinique / kliniek) մասնավոր հիվանդանոց է՝ իր իսկ անձնակազմով, ովքեր ծառայություններ են տրամադրում հիվանդներին, սակայն այստեղ մնալու ընթացքում ձեզ համար սովորաբար պատասխանատու է ձեր ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկը: Բժիշկների մեծ մասը կապված է առնվազն մեկ կամ երկու կլինիկաների և, եթե դուք պետք է հոսպիտալացվեք, կարող է ձեզ ընտրելու հնարավորություն տալ: Թե ո՛ր տեսակի հիվանդանոց կգնաք, կախված է այն բուժումից, որ դուք ստանալու եք, և այն բանից, թե ձեր ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկը պե՞տք է արդյոք դա վերահսկի:

Որ տեսակի հիվանդանոց էլ գնաք, պետք է ձեզ հետ տանեք ձեր բելգիական ինքնության (նույնականացման) քարտը, անձնագիրը, ինչպես նաև ձեր SIS քարտը, եթե բուժվում եք պետական առողջապահական համակարգի շրջանակներում, կամ ապահովագրության ապացույց, եթե ընդգրկված եք մասնավոր առողջության ապահովագրման համակարգում: Ոչ բոլոր բելգիական հիվանդանոցներն են ընդունում բոլոր ապահովագրական ծրագրերը, այնպես որ, եթե կարող եք, նախօրոք ստուգեք:

Ընդունվելիս ձեզ կխնդրեն վճարել կանխավճար, և եթե ձեր հիվանդանոցը չունի պայմանավորվածություն ձեր ապահովագրական ընկերության հետ՝ հաշիվն ուղղակիորեն նրանց ուղարկելու, ապա ձեզ

կխնդրեն կարգավորել ձեր հաշիվը ամեն շաբաթ ձեր հոսպիտալացման ողջ ընթացքում:

## 8. Սոցիալական ապահովագրության համակարգը

Երբ սկսում եք աշխատել Բելգիայում, մուծումներ եք կատարում սոցիալական ապահովության համակարգ: Ձեր գործատուն պետք է լրացնի ձեր անդամակցության համար անհրաժեշտ ձևականությունները, բացառությամբ բժշկական ապահովագրության, որի համար դուք պետք է ընտրեք որևէ փոխշահավետության ընկերակցություն կամ գրանցվեք օժանդակ առողջության ապահովագրման հիմնադրամում: Սոցիալական ապահովության վճարը հավասար է ձեր համախառն աշխատավարձի 13,07%-ին: Դա պահվում է ձեր աշխատավարձից՝ ձեր գործատուի կողմից:

Ավանդական սոցիալական ապահովության համակարգը բաղկացած է երեք ռեժիմներից՝ վարձու աշխատողների, ինքնազբաղվածների և քաղծառայողների համար, և բաղկացած է յոթ ճյուղից.

- կենսաթոշակ և այրիացած կնոջ/տղամարդու թոշակներ,
- գործազրկության նպաստ,
- աշխատանքային դժբախտ պատահարից ապահովագրություն,
- մասնագիտական հիվանդության ապահովագրություն,
- ընտանեկան նպաստ,
- հիվանդության / հաշմանդամության ապահովագրություն,
- ամենամյա արձակուրդներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք `
http://www.socialezekerheid.fgov.be/docs/en/alwa2008_en.pdf (անգլերեն):

# 9. Բնակարանային պայմաններ

Բելգիայում վարձակալության տրվող բնակարաններն առատ են, և դրանք ընդհանրապես, հեշտ է գտնել՝ շնորհիվ վարձույթի եկամուտների հանդեպ բավական առատաձեռն վերաբերմունքի: Առավել խոշոր քաղաքներում, ինչպիսին է Բրյուսելը, տեղի է ունենում դիվանագիտական և կորպորատիվ անձնակազմի մշտական փոփոխություն, այնպես որ բնակարանները և առանձնատները հասանելի են դառնում ողջ տարվա ընթացքում: Պատուհաններին կտեսնեք բազմաթիվ նշաններ՝ սև ֆոնի վրա խոշոր նարնջագույն տառերով ('a louer/te huur') և հեռախոսահամարը, որով կարող եք զանգահարել լրացուցիչ տեղեկությունների համար: Երբեմն հնարավոր է անմիջապես տեսակցություն կազմակերպել՝ բնակարանը տեսնելու, եթե շրջում եք որևէ տարածքում՝ բջջային հեռախոսը ձեռքին, իսկ «նշանների որսը» տարածված միջոց է՝ որոշակի թաղամասում բնակարաններ գտնելու համար:

Բելգիայում բնակարանների մեծ մասը վարձակալության է տրվում առանց կահույքի, ինչը նշանակում է, որ դուք պետք է ապահովեք բնակարանի անբաժանելի մասը կազմող իրերի և հարմարանքների մեծ մասը, այդ թվում՝ առաստաղի լամպեր, խոհանոցի սպասքապահարաններ, կենցաղային սարքեր և հաճախ հատակի ծածկոցներ: Կահավորված բնակարանները հազվադեպ են, և դրանք հաճախ դժվար է գտնել, բացառությամբ կարճ ժամկետով մնալու դեպքում, ընդհանուր առմամբ՝ մեկ տարուց պակաս:

<u>Վարձակալություն</u>

Վարձու տուն կամ բնակարան գտնելուց հետո պետք է բանակցեք և ավարտին հասցնեք վարձակալության պայմանագիրը: Վարձակալության պայմանագիրը պետք է ներառի նաև սեփականությանը պատճառվող վնասի ավանդի գումարի չափը և պայմանները: Տնից կամ բնակարանից դուրս գալիս ձեզանից ակնկալվում է վերադարձնել տունը կամ բնակարանը նույն վիճակին, ինչ վիճակում դա գտնվում էր ձեր կողմից վարձելիս: Եթե դուք զլանաք դա անել, տանտերը կարող է օգտագործել

ծեր ավանդը՝ ծածկելու անհրաժեշտ նորոգումներ կատարելու ծախսերը: Դուք սովորաբար պետք է որպես ավանդ վճարեք երեք ամսվա վարձին հավասար գումար՝ կա՛մ կանխիկ, կամ տվյալ գումարի համար բանկային երաշխիք ձեռք բերելով: Գույքագրումն ընդհանրապես կատարվում է նախքան վարձակալության պայմանագրի ստորագրումը և ավանդի վճարումը:

Վարձակալությունները Բելգիայում պետք է գրանցվեն Ֆինանսների նախարարության գրանցումների ստացման գրասենյակի կողմից՝ ստորագրվելուց հետո չորս ամսվա ընթացքում:

Բելգիայի Սպառողների ընկերակցությունը հրատարակում է Guide de la Location վերնագրով մի գրքույկ, որտեղ բացատրվում են վարձակալության տիպային պայմանները և դրույթները, որոնց առումով պետք է զգոն լինեք: Դիմեք՝ Բրյուսել1060, Յոլանդ 13, Test Achats (հեռախոս՝ +32 2-536 6411):

Որոնումների կայքեր.
http://www.immoweb.be
http://www.brenda.be

## 10. Դիպլոմների ճանաչում (պայմաններ, համապատասխան մասնագիտական մարմիններ)

Արտասահմանյան որակավորումների ճանաչմամբ զբաղվող մարմին.

**Բելգիայի Ֆրանսիական համայնքի Ակադեմիական ճանաչման ազգային տեղեկատվական կենտրոն (NARIC)**
**Direction generale de l'enseignement non obligatoire et de la recherche scientifique**
Բրյուսել B-1080
Ռու ա Լավալ 1
(Rue A. Lavallee 1

B-1080 Bruxelles)
Հեռախոս՝ +32-2-690 87 03
Ֆաքս՝ +32-2-690 87 60
Էլ. փոստ՝ infosup@cfwb.be
http://www.enseignement.be/infosup/

**Ֆլանդերսի Ակադեմիական ճանաչման ազգային տեղեկատվական կենտրոն (NARIC)**
**Կրթության և ուսուցման նախարարություն**
Բարձրագույն և մեծահասակների կրթության գործակալություն (AHoVo)
Բելգիա, Բրյուսել B-1210,
Կոնին Ալբերտ II-պողոտա 15
Հենդրիկ Կոնսինսեխեբաու Թորեն Ա 6
(Hendrik Consciencegebouw Toren A 6
Koning Albert II-laan 15
B-1210 Brussels, Belgium)
Հեռ.՝ +32 2 553 97 33
Ֆաքս՝ +32 2 553 97 05
Էլ. փոստ՝ naric@vlaanderen.be
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/NARIC/
www.equivalences.cfwb.be (ֆրանսերեն)։ Այս ծառայությունը զբաղվում է օտարերկրյա տարրական և միջնակարգ կրթության վկայականների համարժեքությամբ։ Պարզելու համար, թե ձեր բարձրագույն կրթության աստիճանը ստանում է արդյոք նույն ճանաչումը Ֆրանսիական համայնքում, ինչ՝ այն երկրում, որտեղ դա ստացել եք, գրեք հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեով. equi.oblig@cfwb.be կամ՝
http://www.enseignement.be/citoyens/annuaires/sup/equivalences/equivalences.asp (ֆրանսերեն)։

# 11. Միգրանտներին առաջարկվող աջակցության ծառայություններ

**CIRE**-ն Բրյուսելի ֆրանսիախոս փախստականների և ապաստանի հարցերում աջակցության կազմակերպությունների «հովանոցային» կազմակերպություն է. http://www.cire.irisnet.be/

**Փախստականների ֆլամանդական խորհուրդ**
Տրամադրում է տեղեկություններ ներգաղթածներին, լոբբիստական գործունեություն է իրականացնում տարբեր հիմնահարցերի վերաբերյալ և ձեռնարկում է ծրագրեր, որոնք նպաստում են ինտեգրմանը մասնագիտական ուսուցման միջոցով (օրինակ, փախստականներին աջակցում է ստեղծել համայնքահեն կազմակերպություններ և տրամադրում ուսուցում՝ համայնքների ղեկավարներ դառնալու համար), ինչպես նաև լեզուների, զբաղվածության և ձեռներեցության դասընթացների միջոցով:

**Vluchtelingenwerk Vlaanderen**
Բրյուսել 1030
Խաուխերետշտրաց 164
(Gaucheretstraat 164
1030 Brussel)
Հեռ. +32 2 / 274 00 20
Ֆաքս `+ 32 2 / 201 03 76
Էլ. փոստ՝ info@vluchtelingenwerk.be
http://www.vluchtelingenwerk.be

**FAM (Forum asile et migrations)**՝ ապաստան հայցողների և միգրանտների հետ աշխատող 100 կազմակերպությունների ազգային ամբիոն՝ http://www.fam.be/

**Payoke**
Տրամադրում է աջակցություն թրաֆիքինգից տուժածներին
Անտվերպեն 2000, Լըխաց 4

(Leguit 4, 2000 Antwerpen)
Հեռ.` 0032 3/201.16.90
Ֆաքս` 0032 3/233.23.24
admin@payoke.be
http://www.payoke.be

**Բոն**
Սա օտարերկրյա ծագում ունեցող մարդկանց ընդունման գրասենյակն է Բրյուսելում, որը տրամադրում է սոցիալական կողմնորոշման դասընթացներ, հոլանդերենի սկսնակների մակարդակի արագացված դասընթացներ, խորհուրդներ վերապատրաստման և աշխատանքի հարցերով, և անհատական խորհրդատվություն՝ ավելի ինքնուրույն դառնալու, հասարակական մասնակցության և (կամ) ուսումնառության հարցերով:
Բրյուսել 1000
Ռու Ֆ. Դե Շամպայն 23
«Բոն Բրյուսել»
(Bon Brussels
Rue Ph. De Champagne 23
1000 Bruxelles)
Հեռ` + 32 2 - 501 66 80
http://www.bonvzw.be/indexEngels.asp

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**
Հասցե` Բրյուսել 1000, Մոնտոյեր փողոց 40
(Montoyer Street 40, 1000 Brussels)
Հեռախոս `+ 32 2.282.45.60
www.belgium.iom.int

**Բելգիական Կարմիր Խաչ**
Հասցե` Բրյուսել 1180, ռու դե Ստալ 96
(96, rue de Stalle 1180 Bruxelles)
Հեռ.` (32) (2) 371 31 11
Ֆաքս` (32) (2) 646 04 39

էլ. փոստ՝ info@redcross-fr.be (Communauté francophone՝ ֆրանսախոս համայնք) / info@rodekruis.be (Communauté flamande՝ ֆլամանդական համայնք)
Կայքէջ՝ http://www.redcross.be/
Թղթակցության լեզուն՝ ֆրանսերեն:

## 12. Քաղաքացիության ձեռքբերում

Հպատակագրման (նատուրալիզացիա) հիմնական պահանջներն այն են, որ դուք պետք է լինեք առնվազն 18 տարեկան, վերջին երեք տարիների ընթացքում ձեր հիմնական բնակավայրը պետք է եղած լինի Բելգիան, և երկրի հետ պետք է ունենաք «իսկական կապվածություն» (օրինակ, աշխատանք, ընկերներ և ընտանիք, ներդրումներ և այլն): Քաղաքական փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար այս ժամկետը նվազեցվում է մինչև երկու տարվա:

Բնակությունը արտերկրում կարող է հավասարեցվել Բելգիայում բնակության հետ, եթե դուք կարողանաք ապացուցել, որ իսկական կապեր եք ունեցել Բելգիայի հետ՝ վերոնշյալ ժամկետների ընթացքում:

Դուք պետք է լրացնեք համապատասխան ձևաթղթերը, պատրաստեք ձեր ծննդյան վկայականի թարգմանված և վավերացված պատճենը, Բելգիայում բնակության ապացույց և ձեր գործը սատարող ցանկացած այլ փաստաթղթեր, և դրանք ներկայացնեք այն համայնքի վարչություն, որտեղ ապրում եք:

Ձեր գործին ընթացք է տրվում Հպատակագրման ծառայության (Service des Naturalisations) կողմից, և ձեր գործը գնահատվում է Ներկայացուցիչների ազգային պալատի կողմից (Chambre des Representants), որն անհրաժեշտության դեպքում իրականացնում է հետագա քննություններ (ուսումնասիրություններ): Ի վերջո, հպատակագրման ձեր հայցը դառնում է մասը մի օրենսդրական ակտի, որն արտոնվում է Թագավորի կողմից և հրապարակվում Moniteur belge-

ում՝ ազգային օրենսդրի պաշտոնական հանդեսում: Սկսած դրա հրապարակման օրվանից, դուք պաշտոնապես բելգիացի եք և ունեք նույն իրավունքները (և ենթակա եք նույն պարտականությունների), ինչ՝ Բելգիայի մյուս քաղաքացիները: Ձեր մինչև 18 տարեկան երեխաները ևս ինքնաբերաբար դառնում են քաղաքացիներ՝ պայմանով, որ նրանք ապրում են ձեզ հետ:

Եթե դուք ամուսնանում եք Բելգիայի քաղաքացու հետ կամ ձեր ամուսինը (կինը) հպատակագրվում է, քանի դեռ դուք ամուսնացած եք, ապա կարող եք դիմել հպատակագրման՝ Բելգիայում երեք տարի միասին ապրելուց հետո: Ընթացակարգը հպատակագրման լրիվ գործընթացի պարզեցված տարբերակն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք http://www.diplomatie.be/en/services/nationality.asp: